



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 15 ԱՊՐԻԼ, 2024

## ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119 ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

**Ե**րանի անոնց, որոնք ամբաստիր կեանք մը կ'ապրին,

որոնք կ'ապրին Տիրոջ օրէնքին համաձայն:

Երանի անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն, ամբողջ սրտով անոր կը հնազանդին.

որոնք չարիք չեն գործեր, այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:

Դուն հրամայեցիր բժախնդրութեամբ գործադրել հրահանգներդ:

ինչքան կ'ուզեմ անշեղ ընթացքով գործադրել քու կանոններդ:

Այն արեւն ամօթ պիտի չգգամ ամէն անգամ որ

ըշադրութիւնս դարձնեմ քու պատուերներուդ:

Որքան կը սորվիմ արդար դաստիարակներդ,

այնքան կը գոհաբանեմ քեզ անկեղծ սրտով:

Պիտի գործադրեմ քու կանոններդ, բնաւ, բնաւ մի լքեր զիս:

### ՇԱՐԱԿԱՆ

*Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.*

*Եւ զբանակս հրեշտակաց, Տուր պահապան մեզ տկարացս,*

*Փրկեա զանձինս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.*

*Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:*

*Էին անեղ, անսկզբան՝ Ծնունդ անճառ Որդի և Բան.*

*Որ արարեր զտիւ գործոյ, Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.*

*Տուր ի ննջել՝ աչաց մարմնոյ, Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ.*

*Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:*

*Բարուն հոգւոց բանաւորաց, Աղբիւր լուսոյ, քաշխող շնորհաց.*

*Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոց, Լոյս տուր աչաց սրտից մերոց.*

*Ի գիշերաց առ քեզ կանխել, Ընդ հրեղինացն օրհնաբանել.*

*Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:*

### ԱՂՈԹՔ

Բարերար Տէր, որ քու մեծ գթութեամբդ յախտեանկան հանգիստը պատրաստեցիր առաքինութեամբ վաստակածներուն համար, եւ քաղցր հրաւերով քեզի կանչեցիր մեղքով ծանրաբեռնուածները, շնորհիւ որ մենք եւս անխռով խաղաղութեամբ անցնենք այս գիշերը, եւ քու ողորմութեամբդ հանգստացուր մեզ մեղքերու ծանրութենէն, եւ արժանի ըրէ մեզ յախտեանկան հանգիստին: Միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, յախտեանս, ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: (X 3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:  
Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:  
Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ  
Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ:  
Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

### **ՇԱՐՄԱՆ-ՍՐՈՐՔ**

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## **ՍԱՂՄՈՍ 59**

### **ԱՂՈՐՔՔ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ**

**Թ**շնամիներես ազապէ գիս, ով իմ Աստուածս, վրաս յարձակողներէն պաշտպանէ գիս:

Ազապէ գիս չարագործներէն, արհունահեղ մարդոցմէ փրկէ գիս:

Տես, ահա, դարան լարած՝ ինծի կը սպասեն, ինծի դէմ դաւ կը նիւթեն վայրագ մարդիկ,  
իմ ոչ մէկ մեղքիս կամ յանցանքիս համար, Տէր:

Ոչ մէկ անօրէնութիւն գործած եմ, բայց կը յարձակին եւ ինծի դէմ ճակատ կը կազմեն:  
Ել, փես եւ օգնէ ինծի:

Դուն, Տէր, Ամենակալ Աստուած, Աստուածը քու ժողովուրդիդ,

եւ, պապժէ բոլոր ազգերը, ողորմութիւն ցոյց մի փար նենգ չարագործներուն:

Ամէն իրիկուն կը վերադառնան, շան պէս ոռնալով քաղաքին շուրջ կը դառնան,  
իրենց բերնէն դուրս փսիւելով սպանիչ խօսքեր,

որոնք իրենց շրթունքներուն վրայ են միշտ. որովհետեւ կը խորհին՝ «Ով է լսողը»:

Բայց դուն, ով Տէր, կը ծիծաղիս անոնց վրայ, եւ կը հեզնես այսպէս խորհող ազգերը:

Ով իմ Զօրութիւնս, քեզի կը սպասեմ, որովհետեւ ապաւէնս ես, ով Աստուած:

Զիս սիրող Աստուածը ինծի օգնութեան պիտի հասնի,

Աստուած ինծի յաղթապանձ նայիլ պիտի փայ թշնամիներուս վրայ:

Մի բնաջնջեր զանոնք շուրով, որպէսզի չըլլայ թէ իմ ժողովուրդս մոռնայ.

այլ՝ քու գորութեամբդ ցիր ու ցան ըրէ զանոնք, եւ նուաստացուր զանոնք, ով Տէր,  
դուն մեր պաշտպան վահանը:

Իրենց բերնով գործուած մեղքերուն եւ իրենց շրթներէն թափուող խօսքերուն համար,  
թող իրենց ամբարփաւանութեան, իրենց արտաբերած անէծքին ու սուտին մէջ բռնուին:

Կորնացուր զանոնք քու զայրոյթովդ, կորսնցուր, որպէսզի ալ գոյութիւն չունենան,

որպէսզի գիտնան՝ թէ Աստուած է որ կը փրկէ իր ժողովուրդին, ամբողջ աշխարհի փարածքին:

Ամէն իրիկուն կը վերադառնան, շան պէս ոռնալով քաղաքին շուրջ կը դառնան:

Կը թափառին եւ ուրելիք կը փնտռեն, եւ եթէ չկտրանան՝ ամբողջ գիշերը կը կաղկանձեն:

Բայց ես քու գորութիւնդ պիտի երգեմ, մինչեւ առտու ես քու սերդ պիտի երգեմ,

որովհետեւ իմ ապաւէնս ես դուն, իմ ապաստանս՝ երբոր նեղութեան մէջ եմ:

Ով իմ Զօրութիւնս, նուագով քեզ պիտի ներբողեմ,

որովհետեւ ապաւէնս ես, ով Աստուած, գիս սիրող Աստուածը:

**Պ**ահապան ամենայնի՝ *Քրիստոս,*

*աչ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,*

*ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,*

*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*

*եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



**ԱՂՕԹԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ**

Որքան ալ գորաւոր ըլլան մեր թշնամիները, որքան շար ըլլան, ինչպիսի դաւեր ալ նիւթեն, աւարտին յաղթանակը մեր Տէր Աստուծոյն է: Ահա այսպէս կ'արտայայտուի Դաւիթ 59 Սաղմոսով, եւ աղօթք կը բարձրացնէ առ Աստուած եւ պաճշտպանութիւն կը խնդրէ Աստուծմէ: Միւս Սաղմոսներուն նման, այս Սաղմոսն ալ կը ներկայացնէ Դաւիթի հոգեվիճակը: Այո, որքան ալ Դաւիթ ունի վստահութիւնը, որ Տէրը իր կողքին է, աւարտին Տիրոջն է յաղթանակը, բայց իբրեւ մարդ նաեւ կ'ապրի այն հոգեվիճակը, որուն մէջէն կ'անցնի: Յիշենք, մեր Տէր ու Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսի պարագան, որքան ալ խօսեցաւ Իր աշակերտներուն ըսելով, «Ձեր սրտերը թող չխռովին, մի վախնաք, եւ յաղթեցի աշխարհին», բայց Գեթսեմանի պարտեզին մէջ Ան կ'ունենայ այն հոգեվիճակը, որուն համար ալ կը խնդրէ Հօրմէն, որ «Եթէ կարելի է հեռացնէ դառնութեան այս բաժակը, բայց եթէ Հօրը կամքն է, որ խմէ այդ բաժակը, ապա՛ Ան պարտաւոր է խմելու»: Հետեւաբար, հոգեվիճակ մըն է, որմէ կ'անցնի ամէն մէկ արարած: Այո, որքան ալ կը վստահինք, կ'ապաւինինք Աստուծոյ, բայց ունինք մարդկային այն փկար բաժինը, որ նաեւ խորքին մէջ յիշեցում է մեր փկար բնութեան, ուր առաւել եւս կու տայ մեզի առիթը ապաւինելու Աստուծոյ:

1-2 հմր, Դաւիթ կը դիմէ Աստուծոյ, որ ազատէ զինք իր թշնամիներէն, պաշտպանէ զինք իր վրայ յարձակողներէն, ազատէ զինք չարագործներէն, փրկէ զինք արիւնահեղ մարդոցմէ: Այս մանրամասն արտայայտութիւններով, նեղութեան եւ հալածանքի ժամանակ, Աստուած կը սպասէ որ դիմենք Իրեն: Յաճախ ունինք այն փրամադրութիւնը եւ հասկացողութիւնը, թէ Աստուած որպէս ամենագէտ գիտէ մեր պէտքերն ու կարիքները, գիտէ մեր կրած նեղութիւնները, հետեւաբար եթէ գիտէ պէտք է որ միջամտէ առանց մեր իսկ խնդրելուն: Չէ՞: Ինչո՞ւ դիմենք, կամ՝ ինչո՞ւ աղօթենք, արդէն Ինք գիտէ: Բայց այդպէս չէ պարագան: Այլ ընդհակառակը, Աստուած կ'ուզէ որ մեր նեղութեան, դժուարութեան, եւ կամ հալածանքի ժամանակ դիմենք Իրեն, որպէսզի ոչ թէ Աստուած իմանալու, գիտնալու համար, այլ՝ մենք գիտնալու թէ ինչ պէտք է մեզի: Յիշենք այն պարագաները, որ եկան Քրիստոսի եւ խնդրեցինք: Քրիստոսի հարցուց, «Ի՞նչ կ'ուզես որ ընենք քեզի համար»: Ուրեմն, ջրսնք ինչ պէտք կայ աղօթքի, Աստուած գիտէ: Այո, Աստուած գիտէ, բայց մենք գիտենք ինչ բանի կարիք ունինք: Ահա Դաւիթ կը նշէ ինչ բանի որ կարիք ունի: Քանի-քանի առիթներով, Դաւիթ օգնութեան աղօթք բարձրացուց առ Աստուած երբ հալածանքի մէջ էր եւ կեանքը վտանգուած, նաեւ օգնութեան աղօթք երբ Դաւիթ իսկ էր պարտաւոր իր վիճակին:

3-5 հմր, Դաւիթ կը ներկայացնէ իր ողբը իր կրած նեղութեան, եւ կ'արտայայտուի ըսելով. «Թէ որ մեղքիս կամ յանցանքիս համար»: Այսպէս փարօրինակ կը թուի, որպէս թէ Դաւիթ անմեղ ըլլար: Անոր համար այնքան կարեւոր է շրջագիծ կոչուածը, որ փութալ արտայայտութիւն ի՞նչ առիթով ըսուած է: Իր կրած նեղութեան եւ հալածանքի հետ կ'ապուած կ'ըսէ, թէ արդեօք ինչ յանցանք կամ մեղք գործած է, որ Սաւուղը այս աստիճան արեւութեամբ լեցուած կ'ուզէ սպաննել Դաւիթը: Հետաքրքրական է, որ Դաւիթ ինչ որ ունի սրտին վրայ, մտքին մէջ այդ բոլորը կ'արտայայտէ: Ահա աղօթք հասկացողութիւնը, որ չափուած, ձեւուած, մաքրուած բառերու հաւաքածոյ մը չէ, այլ ինչ որ կայ սրտին մէջ, Գրիգոր Նարեկացի սուրբին բառերով, ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ: Այսպիսի վիճակի պարագային է, որ նաեւ Քրիստոս մեզ կը հրաւիրէ ըսելով. «Ինձի եկէք, դուք բոլորդ յոգնած եւ բեռնաւորուած, եւ ես ձեզի հանգիստ պիտի տամ»:

6-9 հմր, այս համարներուն մէջ Դաւիթ կը ներկայացնէ իր թշնամիներուն վիճակը, որոնք իրենց բերնէն սպանիչ խօսքեր կ'արտայայտեն, եւ այնպիսի փրամաքանութեամբ, որ զիրենք լսող չկայ, ակնարկելով, Աստուծոյ: Սակայն, Դաւիթ յարակօրէն կ'արտայայտուի ըսելով. «Բայց Դուն, ով Տէր, կը ծիծաղիս անոնց վրայ, եւ կը հեզնես այսպէս խորհող ազգերը»: Որովհետեւ Դաւիթ վստահ է, որ այդ թշնամիները, որքան ալ գորաւոր են, բայց աւարտին յաղթանակը Տիրոջն է: Ահա Դաւիթ խոնարհութեամբ ինքզինք Աստուծոյ կը յանձնէ, երբեք իր ոյժին չապաւինիր, այլ Աստուծոյ գորութեան: Որքան ալ Դաւիթ յաղթանակ փարաւ Գողիաթին դէմ, բայց ահա երբ պաշարուած է թշնամիներով, երբեք իր անձին հաւակնութիւն չի փար, այլ կ'ապաւինի Աստուծոյ գորութեան: Պօղոս Առաքեալ նոյն արտայայտութիւնը ունի ըսելով. «Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի դէմ դնէք չարին արձակած բոլոր րեսակի միացող նետերուն» Եփես 6:11-12:

10 հմր, ահա մէկ այլ ուրիշ արտայայտութիւն մը, եթէ կարելի է ըսել դաւանութիւն, որ զինք սիրող Աստուածը օգնութեան պիտի հասնի եւ յաղթապանձ նայիլ պիտի տայ թշնամիներուն վրայ: Պօղոս Առաքեալի բացատրութեամբ, «Եթէ Աստուած մեր կողքին է, ով կրնայ հակառակ ըլլալ մեզի»:

11-13 հմր: Դաւիթ կը խնդրէ որ Աստուած թշնամիները շուտով ցիր ու ցան չընէ, ինչո՞ւ, որպէսզի ժողովուրդը ըստ այնմ դաս քաղէ այդ եղածէն եւ չմոռնայ Աստուծոյ ըրած գործերը: Իսկ թշնամիները իրենց ըրածին համաձայն իրենց հապուցումը գտնեն: Եւ ի վերջոյ, Դաւիթ կը խնդրէ որ անոնք Աստուծոյ դպրաստանին համաձայն կորսուին, որպէսզի գիտնան՝ թէ Աստուած է որ կը փրկի իր ժողովուրդին ամբողջ աշխարհի փարածքին:

14-15 հմր կրկնութիւն են ճող համարին:

16-17 հմր փառաբանանք, Դաւիթ Աստուծոյ գործիւնը պիտի երգէ, որ նաեւ կը նշանակէ յայտարարէ, Աստուծոյ սիրոյ մասին պիտի երգէ, որովհետեւ Աստուած է անոր ապաւէնն ու ապաստանը նեղութեան ժամանակ: Մանաւանդ՝ Դաւիթ որպէս երաժշտապետ, երգով պիտի ներբողը Աստուծոյ փառքը, Անոր ըրած գործերը, Անոր փութած փրկութիւնը Դաւիթին: Դաւիթ նաեւ կը դաւանի ըսելով, Աստուած է իմ Զօրութիւնս եւ ապաւէնս, ու զինք սիրողը:

Այսօր մենք ինչ երգ ունինք երգելիք Աստուծոյ ըրած գործերուն համար: Այսօր արդեօք մենք կը դաւանի՞նք, որ Աստուած է մեր Զօրութիւնը, եւ Ինք է մեզ սիրողը: